


Հայաստանի վիճակագրությունը՝ համառոտ


Հայաստանի վիճակագրություն

Ընդհանուր տեղեկություն

Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգն ամբողջովին կենտրոնացված է և ֆինանսավորվում է պետական բյուջեից:

Հայաստանի վիճակագրական ծառայության հիմնական առաքելությունն է հավաքագրել և հրատարակել վիճակագրական տվյալներ կառավարության և հասարակության օգտագործման համար:


Հայաստանի վիճակագրական համակարգը բաղկացած է կենտրոնական սպարատից և վիճակագրության 11 մարզային գործակալություններից:

Անվանումը՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

Բարձրագույն մարմինը՝ Վիճակագրության պետական խորհուրդ

Ղեկավարը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահը, որը միաժամանակ հանդիսանում է խորհրդի նախագահը

Ղեկավարը և խորհրդի մնացած 6 անդամները նշանակվում են Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ 6 տարի ժամկետով:



Հայաստանի վիճակագրություն

Գիրքը պետական կառավարման համակարգում

Վարչական դիրքը. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող մարմին է, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից: Այն պատասխանատու է վիճակագրական աշխատանքների ծրագրի շրջանակում սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրման համար:

Վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատվում է ՀՀ Ազգային ժողովի, իսկ դրա շրջանակում տարեկան ծրագրերը՝ Վիճակագրության պետական խորհրդի կողմից և ֆինանսավորվում՝ պետական բյուջեից:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կառավարման բարձրագույն մարմինը 7 անդամից բաղկացած Վիճակագրության պետական խորհուրդն է, որն իրավասու է ընդունելու վիճակագրության բնագավառին առնչվող նորմատիվ բնույթի իրավական ուժ ունեցող ակտեր:



Հայաստանի վիճակագրություն

Համառոտ պատմություն

Հայաստանի վիճակագրական համակարգի պաշտոնապես սկսել է գործել 1921թ., երբ ստեղծվել է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Մինչ 1990թ. Հայաստանի կենտրոնական վիճակագրության վարչության վիճակագրական աշխատանքն իրականացվել է ԽՍՀՄ կենտրոնական վիճակագրության վարչության անմիջական ղեկավարության ներքո: Սկսած 1990թ. Հայաստանի վիճակագրության վարչությունը անկախ կառավարական հաստատություն էր, կառավարության հսկողության ներքո, որը կրում էր լիակատար պատասխանատվություն հանրապետությունում վիճակագրական աշխատանքների կազմակերպման համար:

2000թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը ձեռք է բերել հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմնի կարգավիճակ, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:


Հայաստանի վիճակագրություն

Իրավական հիմքերը.

- "Պետական վիճակագրության մասին" ՀՀ օրենքի՝ ընդունված 04.04.2000թ.:
- "Մարդահամարի մասին" ՀՀ օրենքի՝ ընդունված 12.10.1999թ.:
- Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրերը.
 - Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր /օրենք/,
 - Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր.
- Վիճակագրության պետական խորհրդի որոշումները և այլ ազգային ու վերազգային նորմատիվային ակտերը:

Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կազմման սկզբունքները.

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին
- երկարաժամկետ միջակայքում կայուն պարբերականությունը
- տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող, ռեսուրսների հետ համաչափությունը,
- սպառողների պահանջարկի ուսումնասիրությունը: (*Պետական վիճակագրության մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդված*)



Հայաստանի վիճակագրություն


Հիմնական գործառնությունները

վիճակագրական տվյալների հավաքագրում, մշակում, ամփոփում, վերլուծություն և հրատարակում, համագործակցություն համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ոլորտում, վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության մշակում և կատարելագործում, տեղեկատվության և տվյալների հավաքագրման համակարգում՝ միջազգային ստանդարտների վրա հիմնված համընդհանուր դասակարգման և կոդավորման համակարգին համապատասխան, վիճակագրական հետազոտությունների կազմակերպում, մարդահամարների անցկացում 10 տարին մեկ, բիզնես - ռեգիստրի ստեղծում, վարում և արդիականացում, սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրում, ամփոփ վիճակագրական տեղեկատվության քափանցիկության և մատչելիության ապահովում, համագործակցություն միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:




Հայաստանի վիճակագրություն

Աշխատակիցների բաշխվածությունն ըստ մասնագիտությունների (որակավորման), 2006թ.



Հայաստանի վիճակագրություն

Անձնակազմն ըստ կրթական մակարդակի 2007թ. հունվարի 1-ի դրությամբ



Հայաստանի վիճակագրություն

Միջազգային համագործակցության համաձայնագրեր.

Ղրղզստանի Հանրապետություն (ստորագրված՝ 21.04.97թ. վավերացված՝ 07.05.98թ.)
 Տաջիկիստանի Հանրապետություն (ստորագրված՝ 10.03.98թ. վավերացված՝ 20.09.99թ.)
 Ռուսաստանի Դաշնություն (ստորագրված՝ 14.05.99թ. վավերացված՝ 20.09.99թ.)
 Բուլղարիա (ստորագրված՝ 01.12.99թ., վավերացված՝ 08.03.2000թ.)
 Բելառուս (ստորագրված՝ 20.09.00թ., վավերացված՝ 28.12.2000թ.)
 Փոխըմբռնման Հուշագիր Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև (ստորագրված՝ 02.10.1998թ.)
 Համաձայնագիր Եվրոստատի և ՀՀ վիճակագրության միջև արտաքին առևտրին վերաբերող վիճակագրական տվյալների փոխանակման մասին (ստորագրված՝ 23.02.99թ., վավերացված՝ 20.09.99թ.)
 Հուշագիր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև համագործակցության խորացման մասին (ստորագրված՝ 26.05.2000 թ.)
 Հուշագիր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև համագործակցության հետագա խորացման մասին (ստորագրված՝ 15.10.2002 թ.)
 Փոխըմբռնման Հուշագիր ՀՀ ԱՎԾ, ԱՊՀ միջպետական վիճակագրության միջև, ՌԴ վիճակագրության միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրումների ծրագրի իրականացման մասին (ստորագրված՝ 17.12.2003թ.)




Հայաստանի վիճակագրություն

Ընթացիկ հետազոտություններ.

Համաշխարհային Բանկի տեխնիկական աջակցությամբ վիճակագրական կարողությունների զարգացման համար Հոլանդական դրամաշնորհ

- Գների վիճակագրություն
- Ազգային հաշիվների կատարելագործում «Ճախսեր- Թողարկում» աղյուսակների մշակում և ներդրում



Հայաստանի վիճակագրություն

Միջազգային դասակարգումների օգտագործում.

NACE Rev 1.1
ISCO-88
CPA, PRODCOM
HS/CN
COICOP

Միջազգային ստանդարտներ.

2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց SSՀՄ-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին: Հայաստանի իշխանություններն անդամագրումը դիտում են որպես վիճակագրական դաշտում բազում նախաձեռնությունների զագաթնակետ: Հայաստանի Հանրապետությունն երրորդ երկիրն է SSՀՄ-ին անդամակցող ԱՊՀ երկրների շարքում: Հայաստանի Հանրապետությունն ԱՄՀ տվյալների տարածման ընդհանուր համակարգին /SSԸՀ/ մասնակցող այն առաջին երկրների խմբում էր, որոնք տեղադրել են մեթադաշտները ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում, օրինակ ծառայելով տարածաշրջանի այլ երկրների համար: Այս առումով էլ Հայաստանի Հանրապետությունը երկրորդ երկիրն է, որ, անցնելով SSԸՀ-ից SSՀՄ-ին, կրկին օրինակ է հանդիսանում SSԸՀ-ի մասնակիցների համար:




Հայաստանի վիճակագրություն

Ընթացիկ հետազոտություններ.

Պետական բյուջե

1. Հայաստանի Հանրապետության **տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն**
2. **Աշխատանքի շուկայի վիճակագրություն**
ա) աշխատուժի հետազոտություն տնային տնտեսությունների միջոցով (Համաշխարհային Բանկ) բ) Մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտությունը
3. **Գյուղատնտեսության վիճակագրություն** հացահատիկի բերքահավաքի որակի վերաբերյալ հետազոտություն



Հայաստանի վիճակագրություն

Վերջին առանցքային հրապարակումներն անգլերեն լեզվով.

- 1.Վիճակագրական հրապարակումների համացանկ, 2006
- 2.Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը, 2001-2005թթ.
- 3.Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը, 1999 -2005թթ.
- 4.Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր (դասակարգման 2-նիշ մակարդակ)
- 5.ՀՀ արտաքին առևտուր (դասակարգման 4-նիշ մակարդակ)
- 6.Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2005 (նախնական զեկույց)
- 7.Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006
- 8.Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2006
- 9.Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2006
- 10.Հայաստանը թվերով, 2006
11. Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2000-2004
12. ՀՀ տրանսպորտը և կապը, 1999-2003
13. Հայաստանի ազգային հաշիվները, 1999-2003
14. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2006
15. Ներքաղաքային ուղևորափոխադրումների ընտրանքային հետազոտության զեկույց,
- 16.Գների վիճակագրության ընտրանքային հետազոտության զեկույց,
- 17.Կազմակերպությունների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության զեկույց,
- 18.Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության առողջապահական մոդուլ (փորձնական հետազոտության) զեկույց:



Հայաստանի վիճակագրություն

Ֆինանսներ


Ծախսերի կառուցվածքը

Էլեկտրաէներգիայի, կապի, ջրնուկլյուդու և այլ ծառայությունների ծախսեր, գրասենյակային ապրանքներ և նյութեր 18.6%


Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ 2.9%

Սարքավորումների ձեռքբերման ծախսեր 0.3%

Սոցիալական վճարներ և տրանսֆերտներ 15.5%




Աշխատավարձ 62.7%




Հայաստանի վիճակագրություն

Կապը վարչական ռեզիստրների հետ



Հայաստանի վիճակագրություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածք Ցանցեր, Կայքեր և Աշխատանքային կայաններ



Հայաստանի վիճակագրություն

Մարդահամար

Հայաստանի Հանրապետությունում առաջին ազգային մարդահամարն անց է կացվել 2001թ. հոկտեմբերի 10-ից - 19-ը

Մշտական բնակչություն - 3 213 011, որից քաղաքային - 2 066 153 գյուղական - 1 146 858 տղամարդիկ - 1 541 999 կանայք - 1 671 012


Առկա բնակչություն - 3 002 594

«Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները» ըստ հանրապետության, ք. Երևանի և առանձին մարզերի ցուցանիշներով հրատարակումները (թվով 12), հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով **հնոտերեստ` <http://www.armstat.am>**



Հայաստանի վիճակագրություն

Տեղեկատվական Տեխնոլոգիաների
ենթակառուցվածք: Ցանցեր, Կայքեր և
Աշխատանքային կայաններ



Հայաստանի վիճակագրություն

Գրադարան

ՀՀ ԱՎԾ-ում գործում է բաց գրադարան, որտեղ առկա են ՀՀ ԱՎԾ բոլոր վիճակագրական արտադրանքները, այլ երկրների և միջազգային կազմակերպությունների վիճակագրական հրապարակումները, մեթոդաբանական ձեռնարկներ և դասագրքեր, վիճակագրության ոլորտը կարգավորող ազգային և վերազգային իրավական բնույթի փաստաթղթեր և այլն:

Երկուշաբթի - Ուրբաթ - 9.⁰⁰ - 18.⁰⁰

Հեռախոս: (37410) 52 33 56, 52 43 03

Ինտերնետ: <http://www.armstat.am>

Հասցեն: Հայաստանի Հանրապետություն,
Երևան, 0010, Հանրապետության
պողոտա, Կառավարական շենք 3,
ՀՀ ազգային վիճակագրական
ծառայություն, 721 սեն.